



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
Գ Ի Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

ք. Երևան

«07» մայիսի 2019 թ.

**Հ Ր Ա Մ Ա Ն N° 13-Ա/Ք**

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 16-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով և 3-րդ կետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝**

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2015 թվականի հունիսի 26-ի «Գիտաշխատողներին գիտական գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգն ու գիտաշխատողներին գիտական գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման հանձնարարության պայմանագրի ձևը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2013 թ. մարտի 13-ի N 07-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 16-Ա/Ք հրամանում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1) 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 1-ի,

2) 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 2-ի,

3) հաստատել գիտական գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտի ձևը՝ համաձայն հավելված N 3-ի:

**ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ԿԱՐԳ

### ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում (բուհերում, այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում ընդգրկված գիտաշխատողների գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման նպատակով հայտերի գնահատման գործընթացը և գիտության ոլորտում գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում նախատեսվող, ինչպես նաև միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով գործուղումների համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի պայմանները:

1. Գիտաշխատողին ֆինանսական աջակցություն տրամադրվում է Կազմակերպությունում գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրին առնչվող միջազգային գիտաժողովին, գիտական կոնֆերանսին, սիմպոզիումին կամ սեմինարին (այսուհետ՝ Գիտական միջոցառում), որպես կանոն, բանավոր զեկույցով հանդես գալու համար գործուղելու դեպքում՝ գործուղման ճանապարհածախսը հոգալու նպատակով (որպես կանոն՝ տարեկան մեկ անգամ):

2. Կազմակերպության ղեկավարը, Գիտական միջոցառմանը գիտաշխատողի մասնակցության հրավերը ստանալուց հետո, ոչ ուշ, քան գործուղման մեկնելու օրվանից երեսուն օր առաջ, ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով գրավոր դիմում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե)՝ ներկայացնելով Գիտական միջոցառման կազմակերպիչի հրավերը կամ զեկույցն ընդունելու մասին ծանուցումը, գիտական գործուղման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի հայտը (այսուհետ՝ Հայտ) և գործուղվող գիտաշխատողի գիտական արդյունավետության բնութագիրը (վերջին 3 տարիների ընթացքում հայտատուի գիտական հրապարակումների (մինչև տասը) և

գիտական միջոցառումներում հրավիրված կամ բանավոր զեկույցների (մինչև հինգ) ցանկերը): Ընդունելի է նաև Կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման առցանց համակարգում (<https://grants.scs.am>) գրանցված գործուղվող գիտաշխատողի անհատական (տասներկու նիշանոց) կոդը ներկայացնելը:

3. Հայտերը գնահատելու համար Կոմիտեն ստեղծում է մրցութային (գնահատող) հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), հաստատում է Հանձնաժողովի աշխատակարգը:

4. Հանձնաժողովը գնահատում է Հայտերը և տալիս է գործուղման աջակցության նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն:

5. Ֆինանսական աջակցության վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացության մասին Կոմիտեն գրավոր տեղեկացնում է Կազմակերպության ղեկավարին:

6. Դրական եզրակացության դեպքում Կազմակերպությունը կազմակերպում է տոմսի գնման գործընթացը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի:

7. Տոմսի գնման գործընթացին առնչվող փաստաթղթերի պատճենները ներկայացնելուց հետո, Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է Գիտաշխատողին գիտական գործուղման համար ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագիր, համաձայն որի՝ Կոմիտեն իրականացնում է կատարված ծախսերի հատուցում:

8. Կազմակերպության ղեկավարը, գործուղման ավարտից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում, Կոմիտե է ներկայացնում գիտաշխատողի գործուղման արդյունքների մասին Կազմակերպություն ներկայացրած հաշվետվության պատճենը՝ կցելով ուղևորի նստեցման կտրոնների (boarding pass) պատճենները:

9. Գիտության ոլորտում գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում նախատեսվող, ինչպես նաև միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով գործուղումների դեպքում ֆինանսական աջակցություն տրամադրելու հիմք է հանդիսանում գործուղման մասին ընդունված իրավական ակտը կամ կազմակերպիչի պաշտոնական հրավերը:

10. Գործուղման մասին իրավական ակտն ընդունվելուց կամ կազմակերպիչի պաշտոնական հրավերը ստանալուց հետո եռօրյա ժամկետում Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին տրվում է համապատասխան հանձնարարական, որտեղ նշվում է գործուղման համար անհրաժեշտ

գումարի (ճանապարհաճախս, մասնակցության վճար, օրապահիկ, գիշերավարձ, այլ) ընդհանուր չափը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի:

11. Գիտության ոլորտում գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում իրականացված, ինչպես նաև միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով գործուղման ավարտից հետո ներկայացվում է հաշվետվություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի:

**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N° \_\_\_\_\_**

**ԳԻՏԱՇԽԱՏՈՂԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

ք. Երևան

«\_\_\_» \_\_\_\_\_ 20.. թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և, *(գիտական կազմակերպության անվանումը)*-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն/ռեկտոր *(անուն, ազգանուն)*-ի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի N° 450-րդ հոդվածի, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

Պայմանագրով Կոմիտեն ՀՀ 20.. թվականի պետական բյուջեի «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի» «Համակարգի գիտական գործուղումներ» միջոցառման իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցներից Կազմակերպությանն է տրամադրում աջակցություն՝ Կազմակերպությունում իրականացվող բազային ֆինանսավորման «*(ծրագրի անվանումը)*» ծրագրի կատարող, *(պաշտոն, անուն, ազգանուն)*-ին *(գործուղման ժամկետներ, երկիր, քաղաք, գիտական միջոցառման անվանում)* մասնակցելու համար:

**2. Պայմանագրի գինը**

Պայմանագրի գինը (տրամադրվող ֆինանսական միջոցների չափը) կազմում է *(թվերով և բառերով)* ՀՀ դրամ:

**3. Պայմանագրի կատարման ժամկետը**

3.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և դադարում է գործուղված գիտաշխատողի հաշվետվության ու դրան կից փաստաթղթերի ներկայացմամբ:

3.2 Պայմանագիրը կարող է վաղաժամ լուծվել գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3 Կոմիտեն ֆինանսական միջոցները փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվեհամարին՝ Պայմանագիրը կնքելու օրվանից 20 (քսան) օրվա ընթացքում:

#### 4. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

Կողմերն ունեն «Գիտաշխատողներին գիտական գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգով» նախատեսված իրավունքներ և պարտավորություններ:

#### 5. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

#### 6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

#### 7. Այլ պայմաններ

Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

##### ԿՈՄԻՏԵ

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22

Հ/Ը 900011033033

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Գլխավոր քարտուղար՝ \_\_\_\_\_

ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ

Կ.Տ.

##### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

*(անվանումը)*

*(հասցեն)*

*(բանկային վավերապայմանները)*

Տնօրեն/նեկտոր՝ \_\_\_\_\_

*(ստորագրություն)*

*(անուն, ազգանուն)*

Կ.Տ.

## ՀԱՅՏ

### ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Կազմակերպության անվանում
2. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի անվանում
3. Գործուղվող գիտաշխատողի
  - 3.1 ազգանուն, անուն, հայրանուն
  - 3.2 ծննդյան ամսաթիվ (օօ/աա/տտտտ)
  - 3.3 զբաղեցրած պաշտոն
  - 3.4 գիտական աստիճան, կոչում
  - 3.5 բջջային հեռախոս
  - 3.6 էլեկտրոնային հասցե
4. Գիտական միջոցառման
  - 4.1 անվանում
  - 4.2 կազմակերպող կազմակերպության անվանում
  - 4.3 անցկացման վայր, ժամկետներ
  - 4.4 ինտերնետային կայք
  - 4.5 ծրագիր (*ընդունելի է գիտական միջոցառման կայքին հղումը*)
  - 4.6 կազմակերպչական և ծրագրային կոմիտեների կազմ (*ընդունելի է գիտական միջոցառման կայքին հղումը*)
  - 4.7 նյութերի հրապարակման ձև (*հրապարակում ամսագրերում, զեյթեղում գիտական միջոցառման կայքում, այլ*)
5. Զեկույցի
  - 5.1 թեմա / վերնագիր
  - 5.2 բնույթ (*հրավիրված պլենար, հրավիրված բանավոր, պլենար, բանավոր*)
  - 5.3 անոտացիա
6. Համաֆինանսավորման աղբյուրներ (*գիտական միջոցառման կազմակերպիչ, ՀՀ պետական բյուջեի այլ աղբյուրներ, այլ*)

Հայտատուի ստորագրություն

Հայտի լրացման ամսաթիվ